ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 օգոստոսի 2024 թվականի N 1380 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՆԴԻԿԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՆԴԻԿԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Սնդիկի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով և համաձայն «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 29-րդ և 47-րդ հոդվածների, N 7 հավելվածի X բաժնի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետությունից սնդիկի արտահանման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Սահմանել Հայաստանի Հանրապետություն սնդիկի ներմուծման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերով սահմանված կարգերով նախատեսված արգելքները և սահմանափակումները տարածվում են Հայաստանի Հանրապետությունից արտահանվող և Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ ԱՏԳ ԱԱ 2805 40 ծածկագրին դասվող սնդիկի վրա:

4. Սույն որոշմամբ սահմանված կարգավորումները չեն տարածվում Հայաստանի Հանրապետությունից արտահանվող և Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 21-ի N 30 որոշմամբ սահմանված վտանգավոր թափոնների ցանկերում ներառված՝ ԱՏԳ ԱԱ 2805 40 ծածկագրին դասվող սնդիկի թափոնների

վրա, որոնց ներմուծման և արտահանման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 90-Ն որոշմամբ սահմանված վտանգավոր թափոններին վերաբերող դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 489-Ն որոշմամբ:

5. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) նախագահին՝ կոմիտեի գործառույթների իրականացման, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև փոխադրվող ապրանքների վերաբերյալ տեղեկությունների ներկայացման ընթացքում Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵԱՏՄ) ապրանք հանդիսացող սնդիկ ԵԱՏՄ անդամ երկրներից ներմուծելու կամ դեպի ԵԱՏՄ անդամ երկրներ արտահանելու վերաբերյալ տեղեկություններ հայտնի դառնալուց հետո եռօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն գրավոր ներկայացնել տեղեկատվություն սնդիկը ներմուծողի կամ արտահանողի և փոխադրվող սնդիկի վերաբերյալ:

6. Սույն որոշման շրջանակներում կիրառվող հասկացությունները կիրառվում են ԵԱՏՄ մաքսային օրենսդրությամբ կամ մաքսային հարաբերություններ կարգավորող՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված իմաստներով:

7. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ սահմանված կարգով ծանուցել Եվրասիական տնտեսական հանձնաժողովին սույն որոշման ընդունման մասին:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 20-րդ օրվանից և գործում է վեց ամիս ժամկետով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

29.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ